

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՌՈՍՏՈՄՅԱՆ

ՀՈՒՅՁԵՐԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ  
(անգլերեն նյութի հիման վրա)

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Շ.Յ. Պարոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Հովհաննիսյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Է. Չուբարյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հուլիսի 8-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. հունիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Մարդիկ բանական և հուզական էակներ են, որոնք, շփվելով արտաքին աշխարհի հետ, դատողություններ են անում իրենց շրջապատող մարդկանց ու առարկաների, վերացական երևույթների և այլևայլ իրավիճակների մասին, փորձում ինքնաճանաչողության միջոցով գտնել իրենց տեղն ու դերն աշխարհում: Կասկած չկա, որ անձի հույզերը մեծ ազդեցություն կարող են ունենալ նրա կենսագործունեության և մասնավորապես խոսքային գործունեության վրա:

Լեզվին և խոսքին առնչվող խնդիրներ քննելիս այսօր առավել արդիական և այժմեական է միջգիտակարգային ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալների վրա հիմնվելը: Քանի որ հույզերն իրենց բնույթով և բովանդակությամբ բազմատարր են, ապա դրանց լեզվաբանական քննության ընթացքում առավելապես մեծանում է լեզվական ոլորտից դուրս առկա գիտելիքների կիրառման անհրաժեշտությունը:

Յիմքեր կան ենթադրելու, որ հույզերի խոսքային և ոչ խոսքային դրսևորումները ոչ միայն ենթագիտակցական, այլև ճանաչողական բնույթ են կրում, այսինքն՝ դրանք գիտակցված մտային որակների խոսքային և ոչ խոսքային արտահայտությունն են: Ահա թե ինչու ներկայումս ընդունված է մտային և հուզական ներաշխարհները դիտել ոչ թե որպես առանձին, անջատ տարրեր, այլ որպես հակադրամիասնական ամբողջություն:<sup>1</sup> Խնդրին մոտենալով լեզվաճանաչողության դիրքերից՝ կարող ենք նշել, որ խոսքաստեղծման ընթացքում ճանաչողությունն առնչվում է խոսողի գիտելիքի կայուն կաղապարների, հիշողության, հասկացման, ինչպես նաև նրա հույզերի, զգացումների, մտադրությունների, համոզումներին, դիրքորոշման, կարիքների և այլնի հետ:<sup>2</sup>

Ինչպես հայտնի է, ճանաչողության գործընթացը, որը ներառում է երկու աստիճան՝ զգայական և ռացիոնալ-բանական, դրանց դրսևորման ձևերի (զգայություն, ընկալում, մտապատկեր, հասկացում, դատողություն, մտահանգում) դիալեկտիկական ամբողջությունն ու միասնությունն է:<sup>3</sup> Ուստի սույն աշխատության մեջ մենք ելնում ենք այն հիմնադրույթից, որ ճանաչողության հիմքը զգայական ու բանական ոլորտների բնականոն համագործակցությունն է, որով մարդն առաջնորդվում է իր կենսագործունեության ընթացքում:

Աշխատանքում **ուսումնասիրության առարկան** հուզական խոսքն է, որն արտահայտում է խոսողի հուզական ներաշխարհը՝ նրա հույզերն ու զգացումները: Ուսումնասիրության **օբյեկտը** հուզաարտահայտչական խոսքային ակտերն են (շնորհակալություն, շնորհավորում, ներողություն, առարկություն և այլն), ինչպես նաև այլ խոսքային ակտեր, լեզվական և արտալեզվական նշույթներ (քերականական կառույցներ, բառակապակցություններ, բառեր, մարմնի և դեմքի շարժումներ), որոնք պարունակում են անհատի հուզական մտածողության տարրեր:

<sup>1</sup> Clore G., Ortony A. Cognition in Emotion: Always, Sometimes, or Never? // Cognitive Neuroscience of Emotion. R. Lane and L. Nadel (Eds.) NY: Oxford University Press, 2000, pp. 24-61.

<sup>2</sup> Sanders R.E. Message effects via induced changes in the social meaning of a response // In J.J. Bradac (ed.) Message Effects in Communication Science, Newbury Park: Sage, 1989, pp. 165-194.

<sup>3</sup> Murray E.J. Motivation and Emotion, New Jersey: Prentice-Hall, Inc., 1964. Лурья А.Р. Язык и сознание, Издательство Московского университета, 1979. Кант Э. Критика чистого разума, М., Мысль, 1964. Հակոբյան Ս.Ս. Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Երևան, «ԱՅՆ Պոլիգրաֆ» ՍՊԸ, 2009:

Ուսումնասիրության **նպատակն** է ուսումնասիրել հուզական մտածողության լեզվաճանաչողական և լեզվագործաբանական հայեցակերպերը և վեր հանել հույզերի արտահայտման խոսքային և ոչ խոսքային դրսևորումների առանձնահատկությունները ժամանակակից անգլերեն դիսկուրսում:

Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները`**

- ✓ լուսաբանել հույզերի լեզվաճանաչողական բնույթը և պարզաբանել հուզական և բանական մտածողության կապը խոսքային գործունեության ընթացքում.
- ✓ որոշարկել խոսքի հուզականության չափանիշները և լուսաբանել հուզական խոսքի սաստկացման և ապասաստկացման լեզվական միջոցներն անգլերենում.
- ✓ քննել հուզական մտածողության իմաստային դաշտերը` ըստ դրական և բացասական բովանդակային բևեռների.
- ✓ լուսաբանել հույզերի դրսևորման խոսքային և հարալեզվական միջոցներն անգլերենում.
- ✓ կատարել «ուրախություն» և «բարկություն» հույզերի խոսքային և ոչ խոսքային դրսևորումների համալիր քննություն անգլերեն գեղարվեստական խոսքում.
- ✓ մշակել ուրախության և բարկության արտահայտչամիջոցների կառավարման սկզբունքներ:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է մտածողության և խոսքային գործունեության` հուզական մտածողության խոսքային և ոչ խոսքային դրսևորումների համալիր քննության անհրաժեշտությամբ: Լեզվաճանաչողական և լեզվագործաբանական հայեցակերպերի զուգակցումը խոսքային գործունեության քննության արդիական մոտեցում է, որը թույլ է տալիս նորովի լուսաբանելու լեզվի համակարգային հնարավորությունները: Կատարված հետազոտությունն արդիական է նաև այն առումով, որ հնարավորություն է տալիս ուղիներ մշակելու տարբեր կարգի հաղորդակցական բախումներից խուսափելու և հույզերի դրսևորումները հնարավորինս կառավարելու համար:

Սույն աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ հույզերի դրսևորումը դիտարկվում է մի կողմից` որպես լեզվական երևույթ և դառնում գործաբանական լեզվաբանության քննության առարկա, մյուս կողմից` որպես ճանաչողական արժեք ունեցող երևույթ, որն ուսումնասիրվում է ճանաչողական լեզվաբանության դիրքերից: Նորույթ է նաև այն, որ աշխատանքում իրականացվում է հուզական մտածողության խոսքային և ոչ խոսքային արտահայտչաձևերի համալիր քննություն:

Աշխատանքի **տեսական նշանակությունն** այն է, որ հուզական խոսքի, մարդկային բանականության բարձրագույն որակների քննությամբ բացահայտվում է խոսքի և գիտակցության, բանական և հուզական մտածողությունների փոխհարաբերությունը: Սույն հետազոտության մեջ կատարված քննությունը և ստացված արդյունքները որոշակի ներդրում են ճանաչողական լեզվաբանության, գործաբանության և դիսկուրսի տեսության մեջ, քանի որ հնարավորություն են ընձեռում նորովի մեկնաբանելու հույզերի դերակատարումը խոսքում` ելնելով հաղորդակցման գործընթացի տարաբնույթ ներակա պահանջներից:

Աշխատանքի **գործնական արժեքն** այն է, որ ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կտան մշակելու անգլերեն կապակցված խոսքին հատուկ հաղորդակցական ձախողումներից խուսափելու միջոցներ և անգլերեն լեզվով ընթացող խոսքային փոխներգործությունն արդյունավետ դարձնելու ռազմավարական ծրագրեր: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել անգլերենի դասավանդման գործնական դասընթացներում, գործաբանական լեզվաբանության, ճանաչողական լեզվաբանության, հոգելեզվաբանության, կոնֆլիկտաբանության, հաղորդակցման և դիսկուրսի տեսության խնդիրները լուսաբանող տեսական դասընթացներում, ինչպես նաև համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներում:

Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** պայմանավորված է ատենախոսության մեջ առաջադրված նպատակներով ու խնդիրներով: Ուսումնասիրությունը տարվում է լեզվագործաբանական մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս երկխոսական միավորների նմուշները հետազոտել իլլուստրիվ և պերլոկուտիվ մակարդակներում: Հետազոտության ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդիկայի զուգակցումն ապահովում է փաստական նյութի մասնավորական և ընդհանրական քննությունը: Աշխատանքում կիրառվել է նաև համատեքստային-նկարագրական մեթոդը, կատարվել է խոսընթացի լեզվագործաբանական վերլուծություն՝ համատեքստի և հարատեքստի գիտելիքային դաշտի կիրառմամբ:

Հետազոտության **փաստական նյութը** ժամանակակից բրիտանական և ամերիկյան գեղարվեստական գրականությունից թաղված երկխոսական միավորներ են /թվով՝ շուրջ 1000/: Հույզերի ոչ խոսքային դրսևորումներն ուսումնասիրելու համար քննության են առնվել հեղինակների նկարագրությունները, դիտարկվել են համապատասխան գեղարվեստական գրքերի էկրանավորված տարբերակները՝ գեղարվեստական կինոնկարները՝ գրական հերոսների ոչ խոսքային ակտերը մեկնաբանելու նպատակով: Նյութի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից բրիտանական և ամերիկյան գեղարվեստական գրականության նմուշները մոտ են ժամանակակից անգլերեն բանավոր խոսքին:

Որպես **նախնական վարկած** ատենախոսության մեջ առաջադրվում է այն դրույթը, որ որպես խոսող/խոսակցի հենքային գիտելիքների՝ մտավոր ներաշխարհի բաղադրատարրեր՝ հույզերը կարևոր ճանաչողական արժեք ունեն խոսքում: Այս դրույթն առաջադրելու համար որպես տեսական հիմք է ծառայում ճանաչողական լեզվաբանության և գործաբանական լեզվաբանության մեջ հիմնավորում ստացած այն դատողությունը, որի համաձայն մտավոր ներաշխարհի տարրերը մեծապես ներազդում են խոսքի ճանաչողական գործընթացների՝ խոսքաստեղծման և մեկնաբանման վրա:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները**՝

1. Հույզերը միջանձնյա փոխհարաբերությունների էական մասն են կազմում և մշտապես մասնակցում են խոսքի ընկալման, մեկնաբանման և խոսքաստեղծման գործընթացներին:
2. Մարդկանց դրական կամ բացասական դիրքորոշումը՝ միմյանց նկատմամբ նրանց ունեցած հուզական վերաբերմունքը, դրոշմվում է հիշողության մեջ և դառնում հենքային գիտելիքների բաղադրատարր: Հետագայում՝ անհրաժեշտության դեպքում, տվյալ հույզերը «վերածնվում են» հուզական լեզվամտածողության միջոցով և արտածվում

խոսքում՝ արտահայտելով խոսքային իրադրության մեջ խոսողի սուբյեկտիվ գնահատականը:

3. Հուզական դատողությունն արտահայտվում է որոշակի խոսքային և ոչ խոսքային արտահայտչամիջոցների օգնությամբ: Այն ձևավորվում է ոչ միայն տվյալ խոսընթացի շրջանակներում՝ խոսքաստեղծման և խոսքի ապակողավորման ընթացքում, այլև կարող է խոսակիցների նախորդ կենսափորձի արդյունք լինել:

Աշխատանքը նախնական փուլում **քննարկվել է** Գերմանիայի Օսնաբրյուք համալսարանում կազմակերպված «Լեզու, գրականություն, իրավաբանություն» միջազգային գիտաժողովում (2009 թ. օգոստոս), ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում կազմակերպված գիտաժողովների ու գիտական սեմինարների ընթացքում (2010-2013 թթ.), իսկ վերջնական փուլում՝ Երևանի պետական համալսարանում Անգլերենի ուսումնասիրության ասոցիացիայի կողմից կազմակերպված «Լեզուն, գրականություն և արվեստը միջմշակութային համատեքստում» միջազգային գիտաժողովում (2011 թ. հոկտեմբեր), ինչպես նաև Պրահայում կազմակերպված «Հաղորդակցություն և վիճաբանություն» միջազգային միջգիտակարգային գիտաժողովի շրջանակներում (2011 թ. նոյեմբեր):

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք, ըստ անհրաժեշտության, բաժանվում են ենթագլուխների, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերն ու խնդիրները, վերլուծության մեթոդները, հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորությունը, տեսական և գործնական արժեքը, որոշարկվում են հետազոտության դրույթներն ու խնդիրները:

Ատենախոսության **առաջին գլուխը («Լեզվի ճանաչողական քննության տեսական հիմքերը»)** բաղկացած է 3 ենթագլխից: Այս գլխում առաջ է տարվում այն առանցքային միտքը, որ ճանաչողությունը բաղկացած է հուզական և բանական մտածողություններից, որոնք ոչ թե հակադրվում են միմյանց, այլ կազմում հակադրամիասնական ամբողջություն՝ անընդհատ համագործակցելով և փոխներթափանցվելով: Ուստի հուզական խոսքի ուսումնասիրության համար անհրաժեշտություն է ծագում անդրադարձ կատարելու ճանաչողական տեսությանը, որի միջոցով հնարավոր է դառնում առավել հավաստի եզրահանգումներ կատարել լեզվական երևույթների վերաբերյալ:

Վերջին տարիներին դիսկուրսի վերլուծության և ճանաչողական լեզվաբանության շրջանակներում կատարված հետազոտությունները վկայում են այն մասին, որ մտավոր գործընթացների դերը խոսքաստեղծման մեջ չափազանց կարևոր է: Հաղորդակցումը, այսպիսով, դիտվում է որպես գործընթաց, որն առավելապես հիմնված է խոսակիցների մտավոր ներաշխարհի վրա և ներառում է ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական մակարդակները:<sup>4</sup>

*Հույզն* ընկալման արդյունք է, որը ներգործում է անհատի ներաշխարհի վրա: Այն մարդու ներքին վիճակի կամ դրա փոփոխության ընկալումը չէ, այլ դրա զգացման արդյունքը: Ըստ Ա. Դանասիոյի՝ հույզերը դասակարգվում են

<sup>4</sup> Verschueren J. Understanding Pragmatics, Amsterdam: Hodder Education Publishers, 1999.

ըստ կարևորության աստիճանի՝ առաջնային և երկրորդային:<sup>5</sup> Առաջնային հույզերը բնածին են և հարում են ինքնապահպանմանն ու վերարտադրությանը: Դրանք ծնվում են ենթագիտակցական մակարդակում. որոշակի պատկերներ ընկալելիս գրգռե է առաջանում, որի հետևանքով ծնվում է մարմնի վիճակի վրա ազդող պատասխան: Երկրորդային հույզերը, որոնք մարդն զգում է առօրյա կյանքում, կարող են գործել գիտակցական և ենթագիտակցական մակարդակներում:

Հույզերի ճանաչողական տեսության համաձայն՝ հույզերի մեջ միշտ առկա է *դատողության* տարրը, որը երբեմն նույնիսկ կարող է գործել ենթագիտակցական մակարդակում՝ առանց արտաբերվելու: Անհատը երբեմն կարող է չգիտակցել տվյալ հույզի կամ հույզերի առաջացման դրդապատճառը կամ դրդապատճառները, իսկ երբեմն մարդը գիտակցական մակարդակում կարող է դատողություններ անել իր զգացած հույզի կամ հույզերի շուրջ՝ այդպիսով իսկ հնարավորություն ստանալով որոշում կայացնելու տվյալ հույզը ակտիվացնելու, դրա դրսևորումը սաստկացնելու կամ խոսքային գործունեության ընթացքում քողարկելով այն նվազեցնելու մասին:<sup>6</sup>

Այսպիսով՝ ճանաչողությունը դիտարկվում է որպես ներքին մտային գործընթաց, որն ի հայտ է գալիս բանական մտածողության մակերեսին խոսքային գործունեության միջոցով: Հույզերի միջոցով մարդ կարողանում է հասկանալ արտաքին իրավիճակի բարենպաստությունը կամ անբարենպաստությունը. հույզերն իրավամբ կարող են համարվել օրգանիզմի գոյատևման համար կարևորագույն համակարգերից մեկը: Հետևապես հույզերը զուտ զգայական երևույթներ չեն, այլ պարունակում են բանական-ռացիոնալ մտածողության տարրեր, և դրանց համագործակցությունն է կազմում ճանաչողության հենքը:

Առաջին ենթագլխում («**Լեզվական կառույցների համակարգումը ճանաչողական լեզվաբանության մեջ**») ի մի են բերվում հույզերի վերաբերյալ հուզական նյարդաբանության, հոգեբանության, լեզվափիլիսոփայության, ճանաչողական լեզվաբանության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքները:<sup>7</sup> Քննարկվում է հուզական հիշողության, հուզական տեղեկության կողավորման և ապակողավորման խնդիրը, հուզական տարրեր պարունակող հենքային գիտելիքների կարևորության հիմնահարցը:

Ավանդաբար ճանաչողական գիտակարգերը հիմնականում քննության են առել ճանաչողության գործընթացին առնչվող տարրերը և գործընթացները՝ լեզուն, գլխուղեղը, մտածողությունը, հասկացումը, ընկալումն ու մեկնաբանումը: Սակայն քանի որ վերջին տարիներին առավել կարևորվում է հույզերի ուրույն տեղն ու դերը լեզվաճանաչողության համակարգում, ուստի անհրաժեշտություն է ծագում ավելի խորը քննելու հույզերի և լեզվաճանաչողական կառույցների փոխհարաբերությունը: Հույզերի լեզվաճանաչողական արժեքը լուսաբանելու համար քննվում է այն հարցը, թե որքանով են ճանաչողությունն ու հուզականությունը փոխկապակցված, ուստի անդրադարձ է արվում փիլի-

<sup>5</sup> Damasio A.R. Descartes' Error: Emotion, Reason and the Human Brain, New York: G. P. Putnam's Sons, 1994.

<sup>6</sup> Solomon R.C. A Passion for Wisdom: A Very Brief History of Philosophy, Oxford: Oxford University Press, 1999.

<sup>7</sup> Damasio, A.R. The Feeling of What Happens: Body and Emotion in the Making of Consciousness, New York: Harcourt, Inc, 1999. Goldie P. The Emotions: A Philosophical Exploration, New York, Oxford: Oxford University Press, 2000.

սոփայությանը, մասնավորապես քննարկվում են փիլիսոփայության սենսուալիստական և ռացիոնալիստական ուղղությունները, որոնց հիմնադրույթների համակցումն օգնում է պարզաբանել հույզերի թե՛ զգայական, թե՛ ճանաչողական էությունը:<sup>8</sup>

Աշխատանքի սույն ենթազխում լուսաբանվում է նաև հույզերի և հիշողության փոխկապակցվածության հիմնահարցը: «*Յուզական հիշողություն*» գիտաբանը ճանաչողական լեզվաբանություն է ներմուծել է. Սըրեյի կողմից<sup>9</sup>, որը մատնանշում է, որ մարդկային մտածողության երկու կարևորագույն հայեցակետերը՝ հույզերն ու հիշողությունը, սերտորեն փոխկապակցված են և մեծապես ազդում են խոսակիցների՝ միմյանց հանդեպ ձևավորած փոխհարաբերությունների վրա: Կարևորվում է նաև *հենքային գիտելիքների* դերը հուզական խոսքում: Մեր հետազոտությանը պարզվում է, որ որքան ուժեղ է եղել նախկինում զգացած հույզը, այնքան վառ է այն պահպանվում մարդու հենքային գիտելիքներում, և հետագայում, գտնվելով նմանատիպ հույզեր հարուցող իրավիճակում, մարդ վերստին սկսում է կամա թե ակամա վերապրել նախկինում զգացած հույզերը, որոնք էլ արդյունքում գտնում են իրենց խոսքային և ոչ խոսքային դրսևորումները: Յույզերի և հիշողության փոխկապակցվածությունը նույնպես ամրապնդում է հույզերի ճանաչողական բնույթի վերաբերյալ մեր հիմնական վարկածը:

Առաջին գլխի երկրորդ ենթազխում («*Յույզերի լեզվամանաչողական արժևորման խնդիրը*») քննարկվում է հույզերի դերը լեզվամտածողության մեջ: Յույզերի ճանաչողական քննությանը պարզվում է, որ դրանք գործելու, կյանքը կառավարելու ազդակներ են, վայրկենական, ակնթաթային ծրագրեր, որոնք մարդու էվոլյուցիայի արդյունքում են ծնվել: Յուզական ապրում զգալով՝ մարդը ձգտում է ինչ-որ ձևով իրենից հեռացնել տվյալ հույզը և որպես դրա միջոց ընտրում է հույզի արտագատումը խոսքային կամ ոչ խոսքային արտահայտչաձևերի միջոցով:<sup>10</sup> Սույն ենթազխում քննվում է հուզականության և բանականության փոխկապակցվածության խնդիրը: Մարդու հուզականությունն ու բանականությունն անընդհատ ներազդում են միմյանց վրա. որքան հզոր է հույզը, այնքան նահանջում է բանականությունը և ընդհակառակը: Մենք գտնում ենք, որ թեև հույզերը զերծ չեն ճանաչողական տարրերից և ներառում են ճանաչողական բնույթի հենքային գիտելիքներ (դրական կամ բացասական) միջանձնյա հարաբերությունների մասին, դրանք կարող են նաև ինքնաբերաբար ձևավորվել՝ մի շարք արտալեզվական գործոններից անկախ: Օրինակ՝ դիմացինի բնավորության բացասական գծերը ճանաչելով հանդերձ՝ մարդ կարող է անձնվեր սիրել նրան: Ուստի դրական կամ բացասական հուզական վիճակները խթաններ են, որոնք կազմում են միջանձնյա հարաբերությունների կերտման հիմքը:

Առաջին գլխի երրորդ ենթազխում («*Յույզերի լեզվական պատկերը՝ ըստ իմաստային դաշտերի*») լուսաբանվում են հույզերի դրսևորումները՝ ըստ իմաստային դաշտերի: Յույզերը բաժանվում են ըստ երկու բևեռների՝ դրական և բացասական: Բացի այդ տրվում է նաև հույզերի՝ ըստ

<sup>8</sup> Лурья А.Р. Язык и сознание, Издательство Московского университета, 1979.

<sup>9</sup> Murray E.J. Motivation and Emotion, New Jersey: Prentice-Hall, Inc., 1964.

<sup>10</sup> Goleman D. Emotional Intelligence, New York, Toronto, London, Sydney, Auckland: Bantam Book, 1995, p. 6.



ընտանիքների տարանջատման սկզբունքը, որն առաջադրվել է Դ. Գոլմանի կողմից:<sup>11</sup>

*Դրական հույզերը* դրսևորում են մերձենալու միտում, ձգտում կամ փորձ: Այս խմբին պատկանող հույզերի շնորհիվ մարդը հնարավորություն է ստանում ընդլայնելու իր աշխարհայացքը, ավելի հեշտ շփման մեջ մտնելու շրջապատի հետ, խուսափելու հասարակական ու խոսքային բախումներից: Այդպիսով դրական հույզերի միջոցով մարդը ներդաշնակ պայմաններ է ստեղծում արտաքին միջավայրի հետ համագործակցելու համար:

*Բացասական հույզերը* դրսևորում են բացառման, հեռացման միտում, ձգտում կամ փորձ: Դրանք ներառում են վախ անժանոթ երևույթների, ուրիշների կատարած գործողությունների հանդեպ: Այդ պատճառով բացասական հույզ զգալիս հրատապ կարիք է առաջանում վերահսկելու ստեղծված իրավիճակը, որպեսզի մարդ կարողանա խուսափել վնասից:

Վերոհիշյալ երկու խմբերը հույզերի մի մեծ պահեստարան ունեն, որոնք իրարից երբեմն շատ քիչ են տարբերվում: Բացի այդ, որոշ հույզեր կարող են լինել թե՛ դրական, թե՛ բացասական՝ կախված մի շարք արտալեզվական գործոններից: Հարկ է նշել նաև, որ երբեմն արտաքին դրսևորումը կարող է չհամընկնել իրական հույզի հետ, ինչպես օրինակ՝ երբեմն արտաքուստ ծշմարիտ թվացող դրական հույզը կարող է իրականում ընդամենը քողարկված բացասական հույզ լինել: Նմանապես բացասական հույզերի ոչ խոսքային դրսևորումներից մեկը՝ արցունքները, իրականում, կախված իրադրությունից, կարող են արտահայտել նաև դրական հույզեր՝ ուրախություն, երջանկություն: Հետևանքն այս պարզ է դառնում, որ հույզերի վերապրումն ու դրսևորումը բարդ գործընթաց է, և դրանց ճիշտ ընկալման ու մեկնաբանման համար պետք է ծանոթ լինել դիսկուրսի համատեքստին և հարատեքստին:

Ատենախոսության երկրորդ գլուխը (**«Հուզական խոսքի դրսևորման առանձնահատկություններն անգլերենում»**) նույնպես բաղկացած է 3 ենթագլխից: Այստեղ առանցքային են հուզական ազդակների ընկալման, հույզերի զգացման, հույզերի ճանաչողական վերծանման, գնահատվող օբյեկտի հուզական և բանական վերլուծության, հույզերի սաստկացման խոսքային միջոցների, ինչպես նաև հույզերի ոչ խոսքային արտահայտչաձևերի առանձնահատկությունների հիմնահարցերը: Երկրորդ գլխի առաջին ենթագլխում (**«Գնահատականը, եղանակավորումը և առոգանությունը որպես խոսքի հուզականության արժևորման օբյեկտիվ չափանիշներ»**) անդրադարձ է արվում հույզերի արտահայտման մի շարք լեզվական միջոցների՝ գնահատման, եղանակավորման, առոգանության կարևորությանը հույզեր արտահայտելիս:

Հարկ է նշել, որ հուզական գնահատականը կապված է մարդու հույզերի հետ, սակայն այս դեպքում ևս մարդ չի կարող արտահայտել զուտ հուզական գնահատական՝ առանց նկարագրողական գնահատական տալու գնահատվող օբյեկտին, և այս դեպքում այդ գործընթացը զերծ չի լինի հուզական տարրերից:<sup>12</sup> Ուստի գնահատականները չեն կարող լինել միայն հուզական կամ

<sup>11</sup> Goleman D. Emotional Intelligence, New York, Toronto, Sydney, Auckland: Bantam Book, 1995.

<sup>12</sup> Вольф Е.М. Варьирование в оценочных структурах. Семантическое и формальное варьирование, М., 1979, стр. 273-294.

միայն բանական. դրանք հուզական-բանական են, սակայն յուրաքանչյուր գնահատականի դեպքում կարող է գերակշռել կամ՝ հուզականը, կամ՝ բանականը՝ կախված խոսողի հոգևոր ներաշխարհից և արտաքին աշխարհի մասին նրա պատկերացումներից: Օրինակ՝

*She sat down rather stiffly in the straight-backed armchair beside the fire.  
"How pretty the fire is," she said. (D. P., Th. S., 1921:360)*

Վերոնշյալ հատվածում հերոսուհին ընկղմված է տաքուկ բազկաթոռի մեջ և հիանում է բուխարիով, ինչից կարող ենք եզրակացնել, որ նա գտնվում է բավականին դրական հուզական հոգեվիճակում՝ զգալով բավարարվածություն, ուրախություն և այլն: Ակնհայտ է, որ օրհորդն իր անձի գոյատևման համար վտանգ ազդարարող ոչ մի ազդակ չի ստանում, հետևաբար ճանաչողական մակարդակում նա գիտի, որ թեև կրակը կարող է այրել, այն իր համար վտանգ չի ներկայացնում, ուստի հերոսուհին միայն հիանում է կրակի գեղեցկությամբ՝ իր դրական հուզերի շնորհիվ վերջինին դրական գնահատական տալով՝ *"pretty"* (զեղեցիկ): Այս ամենից հետևում է, որ հերոսուհու տված դրական գնահատականը գործում է թե՛ հուզական, թե՛ ճանաչողական մակարդակներում:

Այս կամ այն հատկանիշի գնահատման հետ սերտորեն կապված է նաև *եղանակավորման* կարգը: Հույզերի եղանակավորման խնդիրը պայմանավորված է տվյալ պահին հույզի ուժգնության աստիճանով՝ ուժեղ, չեզոք, թույլ: Ըստ այդմ՝ դրական և բացասական հույզերը տարբեր կերպ են արտածվում խոսքում՝ ըստ դրանց ուժգնության աստիճանի արտահայտման:<sup>13</sup> Դրա շնորհիվ որոշ հույզեր ձեռք են բերում տարբերակիչ որակական հատկանիշներ. օրինակ՝ հույզերի հետևյալ շարքը դասավորված է ըստ հույզի ուժգնության աստիճանի սաստկացման՝

*դժգոհություն — բարկություն — գայրույթ — կատաղություն — մոլեգնություն:*

Ինչպես գիտենք, բոլոր լեզուներում կան այսպես կոչված սաստկացնող բառեր, որոնք, դրվելով այս կամ այն ածականից առաջ, սաստկացնում են դրա դրական կամ բացասական իմաստը կամ սահմանափակում քանակական հատկանիշը՝ արտահայտելով հույզի ուժգնության աստիճանը, օրինակ՝ *"I feel good – I feel very good – I feel absolutely good"*: Ընդգծված բառերը աստիճանաբար ուժգնացնում են լավ զգալու դրական հատկանիշը: Նույն բառերը կարող են գործածվել այս կամ այն հուզական վիճակի բացասական հատկանիշը սաստկացնելու նպատակով. *"I feel bad – I feel very bad – I feel absolutely bad"*:

*She stepped over and took his arm. "Let's go in," she said. "The surf scares me, but it's terribly beautiful..." (D. P., "U.S.A.", Part 3: 70)*

Սույն օրինակում հակադիր բևեռներում գտնվող իմաստներ են արտահայտված՝ բացասական՝ *"terribly"*, և դրական՝ *"beautiful"* միավորներով, որն

<sup>13</sup> Додонов Б.И. Эмоция как ценность, М.: Политиздат, 1977. Трипольская Т.А. Эмотивно-оценочный дискурс: когнитивный и прагматический аспекты, Новосибирск, изд-во НГУ, 1999.

էլ շեշտում է դրական հույզի առկայությունը. աղջիկը հիացած է սերֆինգի տախտակի տեսքով: Իմաստների բախման շնորհիվ “terribly” սաստկական մակբայը առավել ուժգին հուզականություն է հաղորդում “beautiful” ածականի արտահայտած դրական գնահատականին: “Terribly” սաստկական մակբայն արտաբերելով շնչեղ և շեշտված առոգանությամբ՝ խոսողն առավել հուզակա- նություն է հաղորդում այդ միավորին:

Անձնական վերաբերմունք կամ հուզական (դրական/բացասական) հոգե- վիճակ արտահայտելու համար մեծ է նաև *առոգանության* դերը: Անժխտելի է, որ ծայրի նույնիսկ չնչին տատանումը, վերհատության մակարդակում ծայրի տոնի և ուժգնության փոփոխությունը կարող են լիովին փոփոխել ասույթի իմաստը:<sup>14</sup> Դեռ ավելին, ճիշտ առոգանություն կիրառելով՝ խոսողը կարող է հուշել խոսողներին, թե խոսքային ակտն ինչպես պետք է ճշգրիտ կերպով ապակողավորվի: Յետևյալ օրինակը ցույց է տալիս, որ խոսողն առոգանական հնար է կիրառում՝ հուզական ազդեցություն գործելու նպատակով՝

*“I want to talk to you.”*

*“What about?” I make my voice icy.*

*“What’s wrong?”*

*“Nothing’s wrong,” I say, wishing I could think of something pointed and vengeful. I have not had much practice being mean, but my voice must do the trick because Dex looks hurt. (G. E., S. B., 2011: 165)*

Զմանրամասնելով համատեքստը՝ նշենք, որ խոսողներին միջև որոշա- կի բացասական դիրքորոշում է ձևավորված: Ռեյչը հիասթափված է Դեքսից, սակայն չի ցանկանում բացահայտ արտահայտել իր վիրավորանքն ու բարկու- թյունը: Բայց քանի որ նրա զգացած հույզերը չափազանց ուժեղ են և գերիշխում են նրա բանական-ռացիոնալ մտածողության վրա, նա չի կարողա- նում վերահսկել դրանք: Այս ընկալումն ակնհայտորեն դրսևորվում են նրա ծայրում՝ *“I make my voice icy”*: *“To make”* բայի գործածումը հուշում է այն մասին, որ Ռեյչը ճանաչողական վերահսկողություն է սահմանում իր հույզերի դրսևորումների վրա. նա դիտավորյալ փոխում է ծայրերանգը, որպեսզի ցույց տա անտարբերություն խոսողներին հանդեպ: Յեղիմակի մեկնաբանություննե- րը նույնպես վկայում են այս մասին՝ *“I have not had much practice in being mean, but my voice must do the trick because Dex looks hurt”*:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («**Չույզերի դրսևորման խոսքային միջոցները**») հիմնականում ուսումնասիրվում է սաստկական մակբայների կի- րառությունը՝ խոսքին հուզականություն հաղորդելու միտումով:<sup>15</sup> Ուսումնա- սիրվել են սաստկացման միջոցների ներասույթային, ասույթային և վերասույ- թային մակարդակները: Մասնավորապես շեշտը դրվել է հուզաարտահայտ- չական խոսքային ակտերի ուսումնասիրության վրա:

<sup>14</sup> Минаева Л.В. Лексикологическая фонетика английского языка, Дисс. канд. филол. наук., М., 1976. Минаева Л.В. Миндрул О.С. 0 тембральной сверхсинтактике английского языка. В сб.: Фонетика и психология речи. Иваново: Изд-во Ивановского государственного университета, 1980, стр.136-150. Миндрул О.С., Фонетика английского языка, М.: Изд-во Моск. Ун-та, 1986.

<sup>15</sup> Buzarov V.V. Essentials of Conversational English Syntax, Moscow: Crone-press, 1998.

Աշխատանքի արդյունքները վկայում են, որ ներասուլթային մակարդակում խոսքին հուզական նրբերանգ հաղորդող բառային միջոցները կարելի է բաժանել երեք խմբի՝

- 1) **դրական**՝ ասուլթին դրական հուզական ներհմաստ հաղորդող աստղական բառեր ու շարույթներ՝ *marvelously, wondrously, fabulously, fantastically, fantabulously* և այլն.
- 2) **բացասական**՝ ասուլթին բացասական հուզական ներհմաստ հաղորդող աստղական բառեր ու շարույթներ՝ *who/what/why/where/ what the hell, (in) the hell, darn(ed)/durn(ed)/damn(ed) if* և այլն.
- 3) **դրական կամ բացասական**՝ աստղական բառեր և շարույթներ, որոնց հաղորդած հուզական իմաստի բնույթը կախված է համատեքստից՝ *crazily, dreadfully, awfully, terribly, terrifically, wizardly, incredibly, damn, right, pretty, too, at all* և այլն:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլերեն խոսքում հուզականությունը դրսևորվում է հուզաարտահայտչական և հարցում ու հաստատում արտահայտող խոսքային ակտերի միջոցով, ինչպես ստորև բերված օրինակներում՝

*“What’s your name?”*

*The man looked up, blinking, too dazed to speak.*

*“Don’t know your own name, eh?” said the officer, glaring at the man savagely, using his curt voice like a whip. “Quick, take off yer shirt and pants and get back to bed.”*

*The Officer of the Day moved on, flashing his light to one side and the other in his midnight inspection of the barracks. (D. P., Th. S., 12)*

Սպան բարկացած է զինվորի վրա, քանի որ նա չի պատասխանում հարցին: Ինչպես գիտենք, պատերազմական իրավիճակում տատանվելու ժամանակ չկա: Յետևաբար, սպան իր խոսքում գործածում է *“own”* աստղական ածականը, որպեսզի արտահայտի իր բարկությունն ու մատնանշի, որ հնարավոր չէ, որ մարդ իր անունը մոռանա: *“Own”* աստղական ածականը դնելով *“name”* գոյականից առաջ՝ խոսողը սաստիկ բացասական հուզականություն է հաղորդում իր հարցադրմանը՝ այդպիսով առավել ուժեղացնելով հարցի բացասական հուզական իլլոկուցիան և այդպիսով առավել մեծացնելով իր ցանկացած հուզական փոխներգործության աստիճանը:

Ինչ վերաբերում է հաստատում արտահայտող կամ արտահայտչական խոսքային ակտերին, ապա կախված համատեքստից և հարատեքստից՝ իլլոկուտիվ իմաստը կարող է լինել դրական կամ բացասական, ինչպես օրինակ ստորև բերված հատվածներում՝

*When he came out of the door, he found Mrs. Johnson leaning against the white marble mantel with a yellowbacked French novel in her hand. She had on a long lacy gown with puff sleeves and wore tortoiseshell readingglasses. She took off the glasses and tucked them into the book and stood holding out her hand.*

*“I’m so glad you could come. I don’t go out much yet, so I don’t get to see anybody unless they come to see me.” (D. P., “U.S.A.”, Part 3: 53-54)*

Տիկին Ջոնսոնը տխուր է. նա տրտմունք է, որ սովորաբար տնից շատ դուրս չի գալիս, ուստի *“I don’t go out much”* հաստատական խոսքային ակտի իլլոկուտիվ իմաստը բացասական նրբերանգ ունի և արտահայտում է տիկնոջ զգացած բացասական հույզերը: Ինչպես գիտենք, *“much”* սաստկական մակբայը սովորաբար չի գործածվում հաստատական նախադասություններում, եթե դրան չեն նախորդում *“very”, “so”, “too”* սաստկական մակբայները:

Խոսող անհատների՝ միմյանց հանդեպ ունեցած դիրքորոշումն արտահայտվում է դրական կամ բացասական հուզական վերաբերմունք արտահայտող խոսքային միավորների օգնությամբ: Հետևաբար, եթե զրուցակիցները միմյանց հանդեպ բացասական կամ դրական հուզական դիրքորոշում ունեն, ապա այդ հանգամանքն անշուշտ անդրադառնում է նրանց խոսքի վրա և ակնհայտ է դառնում վերասույթային մակարդակում: Դիտարկենք մի օրինակ, որտեղ ամուսինները վիճում են՝

*Husband: “I’m working.”*

*Wife: “Oh, I see. What I do isn’t important.”*

*Husband: “Sounds like all you do is gossip.”*

*Wife: “Only during dessert. During lunch we plan the ball.”*

*Husband: “A big society party.”*

*Wife: “Which raises money for charity.”*

*Husband: “Which you don’t give a damn about. It’s just another step up the social ladder for you. You’re social climbing and Boo’s being raised by Consuela!” (M. G., C. o. L., 2007: 67)*

Վեճի պատճառը կնոջ հասարակական գործունեությունն է, ինչը դուր չի գալիս ամուսնուն, քանի որ իրենց երեխայի դաստիարակությամբ զբաղվելու փոխարեն կինը ձգտում է հասարակական դիրք գրավել և ժամանակն անցկացնում է հավաքներում: Սակայն որպեսզի առավել ցայտուն և ճշգրիտ կարողանանք մեկնաբանել այս օրինակում ամուսինների խոսքում առկա հուզական և ճանաչողական գործընթացների փոխալիմանակվածությունը, պետք է անդրադառնանք տվյալ խոսքային իրադրության համատեքստին, ինչից բխեցվում է, որ խնդրի ակունքում ընկած է այն, որ ամուսինը դժգոհ է իր կնոջ վերաբերմունքից և նրա գործունեությունը դիտում է անհեթեթ և անխոհեմ: Նրանք իրականում հեռացել են միմյանցից թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես, և կինը դարձել է շատ անուշադիր: Ուստի ամուսնու խոսքին հատուկ է հուզական վերաբերմունքը, որը կարելի է բնորոշել որպես բարկություն: Այսպես, սկզբում նա քննադատում է կնոջ հասարակական գործունեությունը՝ մեկնաբանելով այն որպես «բանաբասանք»։ *“Sounds like all you do is gossip”*, իսկ այնուհետև ծաղրում է նրա շրջապատը. *“A big society party”*: Ինչպես տեսնում ենք, ամուսնու բարկության պատճառը ոչ թե կնոջ անհարգալից պահվածքն է իր հանդեպ կամ նրա հակամարտահարույց պատասխանները, այլ կնոջ վերաբերմունքը ընտանիքի, իրենց երեխայի հանդեպ և հասարակական կյանքով ապրելու նրա ձգտումը: Այս ամենն ամուսնուն դուր չի գալիս և նա, հարմար առիթն օգտագործելով, իր բացասական հուզական վերաբերմունքն է դրսևորում հանդիմանություն արտահայտող անուղղակի խոսքային ակտերի միջոցով: Քննադատելով կնոջը՝ ամուսինն ուզում է, որ նա ավելի ուշադիր լինի իր ընտանիքի նկատմամբ, կատարի իր մայրական պարտքը: Ամուսնուն հակա-

ռակ՝ կինը բացահայտ հակադիր դիրք չի բռնում և բացասական հույզեր չի դրսևորում: Նա միայն փորձում է արդարացնել ինքն իրեն՝ շեշտելով իր արածի հասարակական կարևորությունը. *“Which raises money for charity”*: Իրականում կինը ներակա ձևով հերքում է իրեն ուղղված մեղադրանքը և հրաժարվում է փոխել իր ապրելակերպը: Կնոջ դիրքորոշումն էլ ավելի է սաստկացնում ամուսնու բացասական վերաբերմունքը. նա կշտամբանք արտահայտող խոսքային ակտերի մի ամբողջ շարք է կազմում՝ քննադատելով կնոջ անկշռադատ վարվելակերպը, որն իրենց երեխային մեծացնելու ամբողջ պատասխանատվությունը թողել է իրենց տնային տնտեսությամբ զբաղվող կնոջ՝ Կոնսուելայի վրա. *“Which you don’t give a damn about. It’s just another step up the social ladder for you. You’re social climbing and Boo’s being raised by Consuela”*: Կշտամբանք արտահայտող սույն խոսքաշարուն խոսողի բացասական գնահատականն էլ ավելի արտահայտիչ է դառնում սաստկական բառերի օգնությամբ՝ *“don’t give a damn”*, *“just”*: Ինչպես տեսնում ենք, կնոջ նկատմամբ բացասական հուզական դիրքորոշումը նախորդ կենսափորձի արդյունք է:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում («**Պուզական խոսքի դրսևորման հարալեզվական միջոցներ**») քննության են առնվում հուզական խոսքի դրսևորման հարալեզվական միջոցները: Քննվում են լեզվաբանության մեջ որպես ոչ խոսքային գործունեության ձևեր համարվող դիմախաղը, ձեռքի և մատների տարաբնույթ շարժումները, մարմնի տարբեր մասերի իմաստալից շարժումները, ձայնային դադարը, ձայնի ուժգնությունը և հաճախականությունը, ձայնի որակը, խոսքի արագությունը և դադարը, հեկեկոցը, կմկմոցը, տարաբնույթ ձայները, ինչպես նաև ծիծաղը և այլն:<sup>16</sup>

Ստորև բերված օրինակում դիտարկվում են դրական և բացասական հույզեր, որոնք արտահայտվում են ոչ խոսքային միջոցներով՝

*Shawanda sagged and would have fallen to the floor if Scott had not caught her. She buried her face in his chest and embraced him. He held her tightly, his tears mixing with hers. Boo and Pajamae ran to them as the courtroom erupted in cheers and shouts and applause. The jurors hugged each other, reporters crowded Scott and Shawanda, Ray Burns sat at the prosecution table shaking his head, and Bobby and Karen kissed like newlyweds. Senator McCall pushed his way through the crowd out of the courtroom. Dan Ford sat shaking his head in wonderment at the turn of events. Shawanda whispered in Scott’s ear, ‘That a righteous name, Atticus.’*

*Scott turned to the bench and his eyes met Judge Buford’s. The judge nodded at Scott and Scott nodded back. (M.G., C.o.L., 2007: 456-457)*

Շավանդան այնքան ազդված է, որ Աքոթն արդարացրել է իրեն դատարանում, որ փաթաթվում է նրան, նույնիսկ քիչ է մնում, որ ուշաթափվի ուրախությունից: Ներկա գտնվողների աչքերում հայտնվում են ուրախության արցունքներ: Նրանք ծափահարում են և ուրախության ճիչեր արձակում: Նույնիսկ

<sup>16</sup> Меграбян А. Психодиагностика невербального поведения, Санкт-Петербург: Речь, 2001. Пиз А. Язык телодвижений (как читать мысли по жестам), РнД: Феникс, 2009.

երդվյալ ատենակալներն են ողջագուրվում, այսինքն՝ ոչ խոսքային միջոցով դրական հույզեր են փոխանակում: Մինչդեռ հակառակորդ թևի ներկայացուցիչները դժգոհություն արտահայտող գլխի շարժումներ են անում: Բորբին և Կարենը, որոնք Սքոթի ընկերներն են, այնքան ուրախ են, որ նույնիսկ դատարանում համբուրվում են: Շավանդան (որը խափշիկ է) անուղղակի շնորհակալություն խոսքային ակտ է արտաբերում՝ Սքոթի ականջին շշմջալով, որ Ատտիկոս Ֆինչը ճշմարիտ անուն է: Շնորհակալություն խոսքային ակտի իլլոկուտիվ իմաստը ճիշտ վերլուծելու համար հարկ է անդրադառնալ հարատեքստային ցուցիչների օգնությանը: Բանն այն է, որ Ատտիկոս Ֆինչը Հարփեր Լիի հայտնի, «Պուլիցեր» մրցանակի արժանացած «Սպանել ծաղրասարյակին» վեպի հերոսն է, որը, դատապաշտպան լինելով, դեմ է գնում ընդունված նորմերին ու կարծրատիպերին և որոշում է, իր սեփական սկզբունքներին հետևելով, պայքարել մի խափշիկի անմեղությունն ապացուցելու համար: Դատավորը նույնպես ուրախ է և հպարտ Սքոթի կատարած աշխատանքով, ուստի, երբ նրանց աչքերը հանդիպում են, նա գլխի շարժումով հավանության մշան է տալիս Սքոթին, քանի որ վերջինն իր՝ արդարության համար պայքարելու մտադրությամբ վտանգել էր իր կարիերան, բարենպաստ կյանքն ու ընտանեկան երջանկությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը (**««Բարկություն» և «ուրախություն» հույզերի խոսքային և ոչ խոսքային դրսևորումների քննությունը անգլերենում»**) նույնպես բաղկացած է երեք ենթագլխից: Սույն գլխում քննության են առնվում «բարկություն» և «ուրախություն» հույզերը՝ դրական և բացասական հույզերի համապատասխան ընտանիքներն առանձին-առանձին: Ուսումնասիրվում են վերոնշյալ հույզերի խոսքային և ոչ խոսքային դրսևորումները գործաբանության և ճանաչողական լեզվաբանության դիրքերից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում (**««Բարկություն» հույզի խոսքային և ոչ խոսքային դրսևորումների առանձնահատկություններն անգլերենում»**) քննվում են «բարկություն» հույզի խոսքային և ոչ խոսքային դրսևորումները ժամանակակից անգլերեն խոսքում:

*Բարկությունը* հույզ է, որը պայմանավորված է անհատի՝ վիրավորված, դրժված կամ սխալ ընկալված լինելու մեկնաբանմամբ և հակվածություն է դրսևորում համապատասխան փոխհատուցմամբ: Քանի որ բարկությունը հաճախ դրսևորվում է կոնֆլիկտային փոխհարաբերություններում, ապա այն քննության է առնվում նաև հակամարտաբանների կողմից. «Բարկությունը դժգոհության զգացում է, որը սուբյեկտի մոտ առաջանում է ընդդիմադիր կողմի գործողության հանդեպ ծագած կոնֆլիկտային վերաբերմունքի արդյունքում, ինչը բացահայտորեն վճառ է նրա շահերին»:<sup>17</sup>

«Բարկություն» հույզն արտահայտում է խոսող անհատի հոգեկան լարված իրավիճակը, որը դրսևորվում է նրա վարքագծում որպես բռնություն, սրտնեղություն, ջղայնություն, թունոտություն, թշնամություն, չարություն, դյուրագրգռություն, բորբոքվածություն և այլն: Հաղորդակցվելիս աֆեկտիվ վարքագիծը դրսևորվում է խոսքային և ոչ խոսքային միջոցներով: Տեղեկության կողավորման և ապակողավորման ժամանակ խոսողներն առաջնորդվում են իրենց հենքային գիտելիքներով՝ մասնավորապես հուզական ներաշխարհում՝

<sup>17</sup> Анцыпов А.Я., Шипилов А.И., “Словарь конфликтолога”, Санкт-Петербург: Питер, 2006.

հիշողության պահեստարանում, անբարված գիտելիքով, ուստի միմյանց հանդեպ տածած բացասական հույզերը կարող են բացասաբար անդրադառնալ խոսքը կերպերի միջանձնյա փոխհարաբերությունների վրա:

